



**Հարգելի ընթերցող,** վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների համար վիճակագրական հրապարակումներից ավելի արդյունավետ օգտվելու տեսանկյունից նպաստավոր պայմաններ ստեղծելու նկատառումով, Արմստատը նախաձեռնել է **«Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2020»**-ի մշակումն ու հրապարակումը:

«Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության տարածքում պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն (Օրագիր) են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը:

**Dear reader,** Armstat has launched developing and publishing of **“CATALOGUE of Statistical Publications, 2020”** to create advantageous conditions for statistical information users to use the statistical publications more efficiently.

According to the 14<sup>th</sup> Article of the Law “On Official Statistics”, Statistical Programs are the basis for the implementation of official statistics on the territory of the Republic of Armenia. The Program includes statistical information necessary for the observation of the economic, demographic, social and environmental situation in country, taking into account the availability of resources, the burdens on respondents and the cost-effectiveness.

Օրագրերը մշակվում են վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա: Հնգամյա և տարեկան վիճակագրական Օրագրերը մշակվում են որպես արդյունավետ ռազմավարական և օպերատիվ կառավարման ու համակարգման առանցքային գործիքներ՝ ողջ ազգային վիճակագրական համակարգի համար:

Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների ուշադրությանը ներկայացվող «Վիճակագրական հրատարակումների համացանկ, 2020»-ը, որպես Օրագրի վերոնշյալ մասի լրացում, նպատակ ունի հանրությանը մանրամասնեցված տեղեկատվություն տրամադրել 2020 թվականի վիճակագրական հրատարակումների ցանկի, դրանց հաճախականության և համառոտ բովանդակության վերաբերյալ:

Վիճակագրական տեղեկատվության որակի, թափանցիկության, սովյալների համադրելիության ապահովման, միջազգային հանրությանը դրանց օգտագործման ավելի լայն հնարավորությունների ընձեռման, կիրառվող մեթոդաբանության և դրա հետագա զարգացման ծրագրերին տեղեկացնելու նպատակով Արժույթի միջազգային հիմնադրամի վիճակագրության վարչությունը հիմնել է Տվյալների տարածման ընդհանուր համակարգ և Տվյալների տարածման հատուկ ստանդարտ:

The programs are developed on the study of the demand of statistical information users. Five-year and annual statistical programs are developed as key tools for effective strategic and operational management and coordination for the entire national statistical system.

“CATALOGUE of Statistical Publications, 2020” presented to the attention of statistical information users, as an addition to the above-mentioned part of the Program, aims to provide the public with the most detailed information on the list, periodicity and brief content of 2020 statistical publications.

Statistics department of the International Monetary Fund (IMF) developed General Data Dissemination System (GDDS) and Special Data Dissemination Standard (SDDS) on purpose to ensure quality, transparency of statistical information and data comparability and to inform the international public about wider possibility of their use, applying methodology and its further development of projects.

Թվարկվածներից՝ Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (հիմնվել է 1997թ. դեկտեմբերի 19-ին) Արմստատն անդամագրվել է 2001թ. մարտի 29-ին, իսկ 2003թ. նոյեմբերի 7-ից՝ նաև Տվյալների տարածման հատուկ ստանդարտին, դրանով իսկ դառնալով վիճակագրության բնագավառում կիրառվող միջազգային ամենախիստ ստանդարտին անդամագրված 54-րդ երկիրը:

Արմստատը շնորհակալ է տվյալների տրամադրման գործընթացում համագործակցող բոլոր գործընկերներին, տվյալներ տրամադրողներին և օգտագործողներին:

Վիճակագրական տեղեկատվությունը կատարելագործելու նպատակով Արմստատն ակնկալում է օգտագործողների հետադարձ արձագանքը:

Of the above-mentioned Armenia has been subscribed to the GDDS (developed on December 19, 1997) since March 29, 2001, and since November 7, 2003, it has been subscribed to the SDDS, and on this occasion Armenia became the 54th subscriber to the SDDS which is the strongest international standard applying in the field of statistics.

We would like to thank you all the partners cooperating with us in the process of producing data, data providers and users.

The Armstat is grateful to get users feedback and suggestions to improve the availability of statistical information.

**Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**S. MNATSAKAN  
PRESIDENT OF THE  
ARMSTAT**

Արմստատի առաքելությունն է՝ հանրության համար պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունն ու տարածումը:

Տվյալների որակը, օգտագործողների վստահությունը և պրոֆեսիոնալ անկախությունը կան և կմնան մեր նախապատվալի խնդիրները:

The mission of the Armstat is to develop, produce and disseminate the official statistics for public use.

Data quality and user's trust, professional independence are and will remain our priority tasks.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	8	CONTENT
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	9	INTRODUCTION
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ	16	STATISTICAL HANDBOOKS
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ	33	STATISTICAL BULLETINS
ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	37	PRESS RELEASES
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ	39	INFORMATIONAL REPORTS



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## INTRODUCTION

«Պաշտոնական վիճակագրությունը» օրենքով լիազորված մարմինների կողմից ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան, հանրային կյանքի էական և չափակցելի երևույթների թվային արտահայտությամբ մշակված, արտադրված և տարածված, բացառապես վիճակագրական ծրագրերում արտացոլված վիճակագրությունն է, որը ներկայացուցչական հիմքով նկարագրում է երկրի վարչատարածքային միավորի, երկրի, տարածաշրջանի կամ ողջ աշխարհի սահմաններում տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական երևույթները:

«Վիճակագրություն» տերմինը ծագել է լատինական «status» բառից, որը նշանակում է երևույթի վիճակ, դրություն:

“Official statistics” are statistics developed, produced and disseminated by law-authorized bodies in accordance with the requirements of the Fundamental Principles of Official Statistics, exclusively reflected in statistical programs that are the numerical expression of the essential and proportionate phenomena of public life, describing on a representative basis the economic, demographic, social and environmental phenomena of the country, territory or whole world.

The term “statistics” originates from the Latin word “status”, which means the state, situation of phenomenon.

«Վիճակագրությունը» գիտություն է, որն արտացոլում է երևույթների «վիճակների նկարագրությունը (փաստումը)»՝ թվային տվյալներով:

1947 թվականի ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի առաջին նիստին հիմք է դրվել զրոքալ վիճակագրական համակարգի կառուցմանը, և 2020 թվականին լրանում է զրոքալ վիճակագրության 73-ամյակը: ՄԱԿ-ի անդամ երկրների վիճակագրական համակարգերը գործում են ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի ներքո, այդ թվում՝ վերջինիս կողմից այլ միջազգային կազմակերպություններին պատվիրակված լիազորությունների շրջանակում, միասնական վիճակագրական ստանդարտներով, մեթոդաբանական և կազմակերպական հանձնարարականներով:

Վիճակագրությունը բնութագրվում է մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ զարգացմամբ, տվյալների հավաքման, մշակման, ամփոփման մեթոդաբանության (*Տէստային շերտ*)՝ Սահմանումներ, Դասակարգումներ, Մաթեմատիկական տեսություն և մոդելներ, *Չործնական շերտ*՝ Տվյալների աղբյուրներ, Տվյալների հավաքման և մշակման գործիքակազմ, Տարածման քաղաքականություն) մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ

“Statistics” also means the process of appropriate data collection and summarizing. This is the science, that reflects the “states” description (arguing)” of phenomena in numeral data.

The first session of the UN Statistical Commission took place in 1947 which founded the building of global statistical system and in the 2020 the 73-th anniversary of global statistics will be celebrated. The statistical system of UN member countries are functioning under the UN Statistical Commission, according to its unified statistical standards, methodological and organisational commitments.

The statistics is characterized by exceeding development in comparison with the other spheres, by necessity of regular improvement of data collection, processing, summarizing methodology (A theoretical layer Definitions, Classifications, Mathematical theory and models, A practical layer Data surces, e.g. surveys and administrative registers, Toolkit for data collection, processing, Dissemination policy, including release calendar and revision policy), as well as by continuous growth of the demand for information containing economic, social, demographic and environmental

պահանջարկի մշտական աճով:

Վիճակագրական տեղեկատվության օգտագործողների և նրանց մոտ առաջացող հարցերի փարատմանը միտված տեղեկատվությունն առկա է Արմստատի վիճակագրական արտադրանքի «Ռրակի հոչակագրերում», որոնցում, ըստ յուրաքանչյուր արտադրանքի, նկարագրված են վիճակագրության օրենսդրական հիմքերը, վիճակագրության նպատակը և մեթոդաբանությունը: Արմստատի վիճակագրական արտադրանքի «Ռրակի հոչակագրերը» գետեղված են [www.armstat.am](http://www.armstat.am) կայքի «Փաստաթղթավորում և որակ» բաժնում: Թեման մանրամասնորեն նկարագրված է «Տվյալների որակի գնահատում և գործիքներ» ձեռնարկում ([https://ec.europa.eu/commission/index\\_en](https://ec.europa.eu/commission/index_en)) և «Եվրոպական վիճակագրական համակարգի որակի հոչակագրում»:

Արմստատի, որպես հանրային շահ հետապնդող մարմնի, վիճակագրական ողջ արտադրանքը (նախնական-օպերատիվ և վերջնական-ամփոփ ու մեթոդաբանությունը) հանրությանը հասանելի է պաշտոնական կայքից:

Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում վիճակագրական տեղեկատվության տարածման առաջնային և գլխավոր գործիքը դարձել է համացանցը, ինչի միջոցով էլ իրականացվում է վիճակագրական արտադրանքի առաջ-

indicators of the country.

The information on statistical information's users and statistics in question is available in the "Quality declarations" Armstat statistical production, where the legislative foundations, the objective and the methodology of the statistics are described for each product.

The "Quality declarations" are available in the section "Documentation" at the following website [www.armstat.am](http://www.armstat.am). The topic is described in detail in the "Handbook on data quality assessment methods and tools" at ([https://ec.europa.eu/commission/index\\_en](https://ec.europa.eu/commission/index_en)) and "Quality declaration of European statistical system".

As a body, acting for public interests, Armstat's whole product (preliminary-efficiency and final-summary and the methodology) is available to the public from the official website.

Under the conditions of the odern information and communication technologies development, the primary and principal tool for the dissemination of the statistical information is the network, by which the priority publication of the statistical product is implemented. Moreover, improves the



նահերթ հրապարակումը: Ավելին, կատարելագործվում է տարածման գործիքակազմը: Արմստատը 2012 թվականի սեպտեմբերի 14-ից՝ շահագործել է [www.armstatbank.am](http://www.armstatbank.am) կայքը: Այն հնարավորություն է ընձեռում օգտագործողներին վիճակագրական տվյալների շտեմարաններից ստանալ տարբեր ձևաչափերով (աղյուսակային, գծապատկերային, քարտեզային) ամփոփ տվյալներ՝ հնարավոր երկար ժամանակագրական շարքերով:

2017 թ. դեկտեմբերից Արմստատի պաշտոնական կայքում շահագործվում է Հայաստանի կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) ցուցանիշների հարթակը:

Տվյալների արժանահավատությունը հնարավոր է «տեղեկատվություն տրամադրող-վիճակագիր» երկկողմանի փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունների առկայության դեպքում:

Այս առումով, գոյություն ունի հակադարձ փոխազդեցություն «Ժամանակ», «արդիականություն», «որակ», «ամբողջականություն» և «օգտավետություն» հասկացությունների միջև:

Վիճակագրական տեղեկատվություն օգտագործողներն առաջնորդվելով «յուրաժամանակության (արդիականության)» պահանջներից, դրդում են տեղեկատվություն տրամադրողներին (ռեսպոնդենտներին) կարճ ժամկետում ամփոփել և

tools of dissemination. Armstat exploited the following website from 2012 september 24 the

[www.armstatbank.am](http://www.armstatbank.am). They give an opportunity to the users to get complete datas from the statistical databases in different formats (tabular, graphical, map)՝ with possible long time series.

Since December 2017. the National Reporting platform for the SDG indicators is operated on Armstat's official website.

The reliability of data could be caused by of availability of bilateral relations of “information provider–statistician” based on the mutual confidence and respect.

In this sense, there is a reverse interaction between the terms of “time”, “modernity”, “quality”, “integrity” and “utility”.

The users of statistical information, guided by the requirements of “timeliness (modernity)”, actuate the information providers (respondents) to summarize and provide to Armstat

---

Արմատատին տրամադրել երբեմն թերի ամբողջականությամբ ցուցանիշներ, որոնք հետագայում կարող են վերանայվել (ճշգրտվել և ամբողջականացվել): Արդյունքում, վիճակագրական ծառայությունները ստիպված են թողարկել նույն ցուցանիշի վերաբերյալ տարբեր արտադրանքներ՝ շտապ հավաքագրված-օպերատիվ թողարկումներ, միջնաժամկետ-վերանայված արտադրանքներ և վերջնական ամփոփ արտադրանքներ:

Վիճակագրական տեղեկատվությունն օգտագործողները, վերը հիշատակված տարբեր տեսակի վիճակագրական արտադրանքներից օգտվելու պարագայում հարկ է, որ հաշվի նստեն ժամանակագրական և այլ սահմանափակումների հետ, որոնք ամբողջացված են ստորև.

sometimes entirety incomplete indicators in short time, which can be revised (adjusted and completed) subsequently. As a result, statistical services are forced to produce different products on the same indicator: urgently collected- efficiency issue, middle time-reviewed products and final summary products.  
timeliness

The users of the statistical information, in case of using the above-mentioned statistical products, should take into account take into account with time and other limitations, which are shown in the table, which is showed below.

**Վիճակագրության յուրաժամանակության, որակի, ամբողջականության և  
 օգտավետության համաձայնեցվածության նկարագիրը**  
**Description of the coherence of the timeliness, quality,  
 completeness and usefulness of statistics**

Ժամանակ Time	Որակ Quality	Ամբողջակա- նություն Integrity	Օգտավետությունը <sup>1</sup> (կիրառական նշանակությունը) Advantage <sup>1</sup> (applied importance)
ժիչ short	ցածր low	թերի incomplete	գուտ միտումների մասով օպերատիվ վճիռների համար for operative decisions related only to trends
գերօպերատիվ very operative			
միջին average	միջին medium	միջին average	որոշումների համար for decisions
օպերատիվ operative			
երկար long	բարձր high	լիակատար complete	վերլուծությունների համար for analyses
պակաս արդիական less up-to-date			

<sup>1</sup>«Վիճակագրական տվյալները համաձայնեցված են կամ համատեղելի խելամիտ ժամանակահատվածում»՝ համաձայն «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի» սկզբունք 14-րդի՝ Համաձայնեցվածություն և համադրելիություն (ընդունված 24.02.2005թ. Վիճակագրական ծրագրային կոմիտեի նիստի ժամանակ և հաստատված Եվրոպական Համայնքների հանձնաժողովի կողմից (Բրյուսել, 25.05.2005թ. COM (2005) 217)):

*Statistical data are coherent or reconcilable over a reasonable period of time according to the Principle 14 : Coherence and Comparability of European Statistics Code of Practice (adopted on 24 February 2005 at the meeting of Statistical Program Committee and approved by Comm the Commission of the European unities (Brussels 25May 2005 COM(2005) 217))*

Այս առումով, հարկ է հաշվի առնել, որ տեղեկատվական ամսական զեկույցներում հրապարակված բոլոր ցուցանիշներն իրենց բնույթով նախնական են: Ամբողջական - ամփոփ ցուցանիշները հրապարակվում են պաշտոնական կայքի տվյալների շտեմարաններում, վիճակագրական տարեգրքերում և ժողովածուներում, որոնցում ևս ժամանակագրական շարքերում զետեղված վերջին տարիների ցուցանիշները դեռևս կարող են ենթարկվել վերանայումների:

In this sense, it's necessary to take into consideration, that all the indicators published in monthly informational reports, by their nature are preliminary. Complete, summary indicators are published in databases of the official website, in statistical yearbooks and handbooks, in which also the indicators of the recent years in time series may still be subjected to reviews.